«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը 6-րդ դասարանի մայրենիի դասին «Գլուխգործոց» թեմայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Գայանե Աղեկյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Զորակապի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Գլուխ 1

1.1. Մի քանի խոսք իմ ընտրած թեմայի մասին----------4

1.2. Դասի կառուցվածքը----------6

Գլուխ 2

2.1. Մայրենիի իմ դասը: Դաս առաջին ----------8

2.2. Մայրենիի իմ դասը: Դաս երկրորդ----------12

Եզրակացություն ----------18

Օգտագործված գրականության ցանկ ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 2-րդ գլխի 35-րդ հոդվածն ամրագրում է,որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք:Դպրոցն այն կառույցն է,որն իրականացնում է սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքը և դաստիարակություն, ու շատ կարևոր է,որ

1)Եվ՛կրթությունը,և՛դաստիարակությունը լինեն ժամանակին համահունչ՝**արդիական**: Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում,որ նորովի մատուցվի նյութը,մատուցման գործում իրենց տեղն ունենան համացանցը,նոր տեխնոլոգիաները: Սովորողը դպրոցում պետք է ձեռք բերի արդիական գիտելիք, հմտություն՝որոշակի դիրքորոշում,որով վերաբերմունք ձևավորի, և նրա մեջ ձևավորվի արժեքային համակարգ :

Ես ներկայացնելու եմ, թե ինչպես եմ սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորում 6-րդ դասարանում մայրենիի դասին «Իմ երկրի գույները» բաժնի «Գլուխգործոց» թեմայի դասավանդման ընթացքում: Իմ աշխատանքի թեման է՝«Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը 6-րդ դասարանում մայրենիի դասին «Գլուխգործոց» թեմայի դասավանդման ընթացքում»

2)Իմ աշխատանքի **նպատակն** է՝ սովորողները ուսումնասիրեն, ապա վերլուծեն, համեմատեն, բնութագրեն,կարծիք հայտնեն,իրենց կարծիքը հիմնավորեն, վերջապես արժևորեն այն ամենը,ինչը նրանց մեջ կձևավորի արժեքային համակարգ:

3) **Խնդիրներ**. Մեր նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ 1) ուսումնասիրենք պատմվածքը, 2) տարբեր մեթոդներով,հնարներով վեր հանենք հերոսների հարաբերությունները,կիրառենք խաղեր,խմբային և անհատական աշխատանքներ, 3)փնտրենք միջառարկայական կապեր,կատարենք գրավոր և բանավոր աշխատանքներ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը 6-րդ դասարանի մայրենիի դասին «Գլուխգործոց» թեմայի դասավանդման ընթացքում

Գլուխ 1

1.1. Մի քանի խոսք իմ ընտրած թեմայի մասին

ԵՍ ընտրել եմ 6-րդ դասարանի մայրենի առարկայից «Գլուխգործոց» թեման, որը ներառված է «Իմ երկրի գույները» բաժնի մեջ: Փնտրտուքներիս ընթացքում կանգ եմ առել այս թեմայի ուսումնասիրման վրա՝ նրա մեջ գտնելով և՛ ազգային, և՛ համամարդկային արժեքներ : «Գլուխգործոց»-ը Վիգեն Խեչումյանի պատմվածքներից է, որը դասագրքում կրճատումներով է ներկայացված, մենք կծանոթանանք ամբողջ պատմվածքին և կուսումնասիրենք դասագրքում տրված մասը:

Վիգեն Խեչումյանը հայ արձակագիր, թարգմանիչ է, ծնվել է 1916թ. Երևանում, 1940թ. ավարտել է Երևանի Պետական Համալսարանի պատմության ֆակուլտետը և այդ թվից էլ եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ : Աշխատել է Երևանի Մատենադարանում, 1943-1956 թվականներին եղել է Մատենադարանի ձեռագրատան վարիչը, առաջին պատմվածքը տպագրվել է 1939թ.: Նրա գործերից են «Չատու խանի պարտությունը», «Ծաղկողի որդին», «Զվարթնոց», «Ցայգածաղիկ» պատմվածքները, «Գույներ և երանգներ» ակնարկները, «Գիրք լինելության». վիպասանություն առաջին և այլն: «Գլուխգործոց» պատմվածքը լույս է տեսել 1964թ.[1]

Դասագրքում ներկայացված բաժինն էլ, թեման էլ գունագեղ են, հարուստ ասելիքով, բառապաշարով, մարդկային հարաբերություններով, մանրանկարչության, ծաղկողների աշխատանքի մասին տեղեկություններով, պատկերավոր խոսքով, դարձվածքներով : Պատմվածքի ուսումնասիրությունը, վերլուծությունը հնարավորություն կտան սովորողների մեջ ձևավորելու արժեքային համակարգ՝ ազնվություն, արդարություն, հայրենասիրություն, բարություն, ապրումակցում, դիմացինին հասկանալու և օգնելու պատրաստակամություն, դրսևորելու քննադատական մտածողություն, կողմնորոշվելու կարողունակություն և այլն:

[1] https://hy.wikidark.org/wiki/%D5%8E%D5%AB%D5%A3%D5%A5%D5%B6_%D4%BD%D5%A5%D5%B9%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6

Սովորողները կճանաչեն հերոսներին, կդիտարկեն նրանց հարաբերությունները, կտեսնեն մարդկային հարաբերություններում արդարություն,բարություն, ազնվություն, ապրումակցում, խարդախություն, շահամոլություն, սեփական ազգային արժեքների ճանաչողություն, դրանք արժևորելու, գնահատելու հատկանիշ կդրսևորեն, կձևավորվի հայրենասիրություն: Քննադատական մտածողություն կձևավորեն, կփորձեն սեփական կարծիք հայտնել և հիմնավորել, կբնութագրեն, կհամեմատեն հերոսներին, կճանաչեն հերոսներին, ինչպես նաև իրենց՝ ինքնաճանաչողություն ձեռք կբերեն. ինչպես կվարվեին, եթե լինեին նրանց փոխարեն, կմնային Երիցակ պապի հետ այդ պայմաններում,թե կհեռանային նրանից էլ,այդ պայմաններից էլ:Այս բոլորը սովորողները անելու են իմ օգնությամբ,իմ ուղղորդմամբ՝ բազմաթիվ մեթոդների ու հնարների կիրառմամբ: Թեմայի ուսումնասիրման ընթացքում կկատարվեն նաև քերականական վարժություններ,բառային աշխատանքներ, քանի որ մայրենիի դասն ինտեգրված դաս է,և մենք այդ հնարավորությունն ունենք: Ամբողջ աշխատանքի ընթացքում կենտրոնում լինելու է աշակերտը.նա լինելու է չափորոշչով սահմանված բաղադրիչների՝գիտելիքի, հմտության, դիրքորոշման և արժեքային համակարգի տերն ու կրողը:

ՈՒսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է, մարդուն այնպես դաստիարակելը, որ համապատասխանի ժամանակակից պահանջներին, դպրոցում ստացածը կիրառի կյանքում:Այդ պատճառով էլ ուսումն այնպես պետք է կազմակերպել , որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ:Ժամանակակից սովորողին արդիական դաստիարակելու համար շատ մեծ դեր ու հնարավորություն ունեն ժամանակակից տեխնոլոգիաները , որոնք ոչ միայն լայն տեղեկատվության աղբյուր են, այլև օգնում են գիտելիքների արագ հնացող պայմաններում ետ չմնալ ժամանակից, նորություններից:

1.2. ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Գլուխգործոց» պատմվածքի ուսումնասիրման համար մեզ հատկացված է երկու դասաժամ ,և երևի անհրաժեշտ է կազմել ժամաքանակին համապատասխան օրվա պլան:

Ասեմ,որ դասապրոցեսը ի՛նձ համար և ընդհանրապես ստեղծագործական պրոցես է: Ուսուցիչը պիտի ազատ լինի և՛ իր գործողություններում, և՛ իր մտածողությամբ, որ կարողանա սովորողին օգնի ստեղծագործ անհատ ձևավորվելու գործում: Ես չեմ սիրում կաղապարվել օրվա պլանով,որը ենթադրում է,թե ուսուցիչը նախապես ինչ-որ ձևով պատրաստվել է մինչ դասարան մտնելը,սովորողին ներկայանալը: Բայց պատրաստվել հատկապես նշանակում է նյութը մանրամասն ուսումնասիրել՝ ծանոթ լինել գրավոր և բանավոր հնարավորինս շատ աղբյուրների, սերտ կապ ունենալ համացանցի հետ, կարողանալ կապ ստեղծել, ինտեգրել՝ համակարգել այլ առարկաների հետ, անպայման հաշվի առնել պետական չափորոշիչները, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկությունները և էլի շատ բաներ:Ըստ այդմ դասը կունենա հետևյալ կառուցվածքը:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հիմնական հասկացություններ	Ինքնություն Հաղորդակցում Արժեքային համակարգի ձևավորում Ստեղծարարություն
Ենթահասկացություններ	Վերաբերմունք Բանավոր հաղորդակցում Կապակցված խոսք
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Ժամանակ և տարածություն Անհատ և հարաբերություն
Ձևավորվող կարողունակություններ	Ինքնաճանաչողական և սոց.կարողունակություն Սովորել սովորելու կարողունակություն

	Միջառարկայական կապեր. երաժշտություն,նկարչություն,գրականություն,պատմություն,աշ-խարհագրություն,ճարտարապետություն
Նպատակները	Բնութագրել հերոսներին,ցույց տալ նրանց տարբերությունը Վերլուծական կարողությունների զարգացում Քննադատական մտածողության զարգացում
Սովորողի դիրքորոշումը և արժեքի ձևավորում	Արդարություն,ազնվություն,բարություն Իսկական ընկերության կարևորում Իրավունքներին տեր կանգնելու կարևորում Արժեքային համակարգ
Վերջնարդյունքներ	Բնութագրել և համեմատել հերոսներին Մատնանշել նրանց արարքների հետևանքները Ձևակերպել հարցեր և գտնել պատասխանները,հիմնավորել
Կիրառվող մեթոդներ	Հակիրճ դասախոսություն Քառաբաժան m-աձև աղյուսակ Հարց ու պատասխան Զրույց ,խմբային աշխատանք,փոխներգործուն մեթոդ Բլումի երիցուկի մեթոդ
Իմաստավորում և կշռադատում	Հասկացա՞նք Երիցակ պապի լռությունը Ընդունեցինք Մոմիկի պատասխանը Գորգիկին Հասկացանք իրական արժեքը որն է.արվեստ Մարդկային գեղեցիկ,հավասար,արդար հարաբերություններ Ճանաչեցի՞նք բնության գույներն ու գեղեցկությունները
Ամփոփում	Ի՞նչ է սովորեցնում պատմվածքը ժամանակի և տարածության մեջ փնտրել ազնիվ, արդար, բարի, ընկերասեր, դիմացինի ցավը հասկացող մարդուն

ԳԼՈՒԽ 2

2.1. ՄԱՅՐԵՆԻԻ ԻՄ ԴԱՍԸ: Դաս առաջին

Վեցերորդ դասարանում մայրենիի դաս է:Ես ողջունում եմ երեխաներին և հարցնում.

-Երեխանե՛ր,ի՞նչ գույներ եք սիրում:Նրանք տարբեր պատասխաններ են ասում՝ կարմիր, դեղին, կապույտ, նարնջագույն և այլն:Հարցնում եմ նաև, թե իրենց սիրած գույները տեսնում են շրջապատում, ամենուր,բնության մեջ:Երեխաներից ստանում եմ տարատեսակ պատասխաններ.

-Այո՛,մեր այգում:

-Մեր սարերին,երկնքին նայելիս:

-Մարդկանց դեմքին,աչքերին նայելիս:

-Ծաղիկներին,կենդանիներին նայելիս:

Նրանցից մեկը հարցնում է,թե ես ինչ գույն եմ սիրում:Սիրով պատասխանում եմ ու շարունակում,որ այսօր նոր բաժին ենք ուսումնասիրելու, որը կոչվում է «Իմ երկրի գույները»: Բացատրում եմ ,որ ամեն մարդ պիտի սիրի ու լավ ճանաչի իր երկիրը,տեսնի նրա ամեն գույնն ու երանգը. Արագածի վեհանիստ սպիտակությունը, որ ամեն րոպե մեր աչքի առաջ է, Սևանի լաջվարդն ու փիրուզը,մեր ծաղիկների, քարերի հազար գույները և այլն:

-Գիտե՞ք,երեխանե՛ր,կան մարդիկ,որոնք այդ գույներն ավելի լավ են տեսնում,քան մենք, և նրանք նկարիչներ են, նրանք մեր երկրի գույները հանձնում են կտավին: Երեխաներից շատերը արձագանքում են.

-Մարտիրոս Սարյանը,- և ավելացնում, որ Սարյանի «Հայաստան» կտավի կրկնօրինակը մեր դպրոցի պատին կա: Երեխաներին ոգևորելով ՝ասում եմ, որ մենք

համացանցով կդիտենք ոչ միայն Սարյանի, նաև Մ.Ավետիսյանի ,Վ.Սուրենյանցի և ուրիշների կտավներից: [2]

Մ.Ավետիսյան «Ջաջուռ» **Վ.Սուրենյանց «Ոտնահարված սրբություն»**



Երեխաներն իրենք են ոգևորված փորփրում, համացանցում գտնում հիշածս նկարիչների գործերը,ցույց տալիս, ես շարունակում եմ նկարչության հետ կապը և բացատրում-պատմում, որ հնում՝ միջնադարում, ձեռագիր մատյանները նկարազարդում էին գեղեցիկ նկարներով, նախշերով, նույնիսկ մեծատառերը գրում էին կենդանիների,թռչունների տեսքով,այդ մարդկանց անվանում էին ծաղկողներ,մանրանկարիչներ.

-Այս բառերին մենք էլի ենք հանդիպել,-հիշում են երեխաներից,- ու բացատրում բառերը:

-Ճիշտ եք, ապրեք,-ասում եմ ու շարունակում,որ հայ մեծ մանրանկարիչներ են Ս. Պիծակը, Թ.Ռոսլինը, Մոմիկը, հենց Մոմիկի մասին էլ մի սիրուն պատմվածք պիտի ուսումնասիրենք, որի վերնագիրը «Գլուխգործոց» է: Ներկայացնում եմ, որ պատմվածքի հեղինակը հայ արձակագիր Վիգեն Խեչումյանն է, նա ծնվել և կրթություն է ստացել Երևանում,աշխատել է Մատենադարանում, մի պահ դադար եմ տալիս , որպեսզի երեխաները խոսեն, զրուցենք, քանի որ կան ձեռք բարձրացրած

[2] https://www.youtube.com/watch?v=x8fQlkFQpgM

երեխաներ:Մի հինգ-վեց աշակերտ ասում են , որ եղել են Երևանի Մատենադարանում, մի երկու բառով պատմում, որ շատ հետաքրքիր էր, ես բացատրում եմ, որ Մատենադարանը ձեռագիր գրքերի շատ մեծ պահոց է, կարևոր գիտական կենտրոն:Հետո ասում եմ, որ Վ. Խեչումյանը գրել է շատ պատմվածքներ, կատարել թարգմանություններ:Երեխաներին հանձնարարում եմ տանը համացանցից ծանոթանալ Վ. Խեչումյանի կյանքին, կարդալ նրա պատմվածքներից, օրինակ՝ «Ցայգածաղիկ» -ը:

Աշակերտներից մեկին գրատախտակին գրել եմ տալիս գլուխգործոց բառի բացատրությունը և սկսում եմ կարդալ պատմվածքը: Կարդում եմ գեղեցիկ, արտահայտիչ, երեխաները հետևում են, ես կարդալու ընթացքում բացատրում եմ կարմիր գրված բառերը: Պատմվածքն ավարտելուց հետո երեխաներին հարցնում եմ՝ դուր եկավ պատմվածքը, լսելով դրական պատասխաններ՝ երեխաներին հիշեցնում եմ, որ պատմվածքը արձակ ստեղծագործության տեսակ է, ու հարց եմ ուղղում, իսկ բանաստեղծությու՞նը: Երեխաները հիշում են՝ չափածո:Առաջադրում եմ բառատետրերում գրել կարմիր գրված բառերի բացատրությունը, նաև **գունաթափ**, **անգետ**, **տաքանալ** բառերի հոմանիշներն ու հականիշները:Աշխատանքը տետրերում կատարելուց հետո մի քանիսին հանձնարարում եմ գրեն գրատախտակին, որ բոլորը ստուգեն,ուղղեն: Հետո առաջարկում եմ դասը կարդալ և ներկայացնել տարվա եղանակներ նկարագրող հատվածները և ասել, թե որ եղանակներն են նկարագրված:Երեխաները ընտրում են հատվածները , կարդում ու ասում, որ ձմեռ կա, գարուն, աշուն, մի փոքր էլ ամառ:Երեխաները իմ օգնությամբ ներկայացնում են բնապատկերների պատկերավորությունը,հիանուն դրանցով: Այստեղ առաջարկում եմ համացանցից լսել Վիվալդիի «Տարվա եղանակները»[3] ստեղծագործությունից հատվածներ, իսկ տանը կլսեն ամբողջությամբ: Հետո պատմում եմ Մոմիկ[4] ճարտարապետ-մանրանկարչի մասին, որ նա ծնվել է 13-րդ դարում Վայոց ձորում,

[3] https://www.youtube.com/watch?v=D3qrt0EgVd8
[4] https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%B4%D5%AB%D5%AF

ապրել մինչև 1333թ., ապրել ու ստեղծագործել է Հայաստանում, ծնողներ չի ունեցել, ապրել է Երիցակ վարպետի հետ, ծաղկել է ավետարաններ, քանդակել Նորավանքի խաչքարը, Արենիի եկեղեցու Աստվածամոր և մանկան պատկերը, Նորավանքի գավթի Աստվածամոր և Հայր Աստծո պատկերաքանդակները, կառուցել է Նորավանքի եկեղեցու գավիթը, Արենիի եկեղեցին:Երեխաները համացանցից գտնում են Նորավանքի նկարները, մանրանկարներ:Երեխաներին ասում եմ, որ Մոմիկը նաև մեծ ճարտարապետ է, ու նրանց առաջարկում եմ համացանցով բացել ՀՀ քարտեզը, գտնել Վայոց ձորի մարզը, Սյունիքը, որովհետև Վայոց ձորը Մոմիկի ժամանակ եղել է Սյունյաց աշխարհի մի մասը, Նորավանքը, իսկ տանը, համացանցից օգտվելով, պարզել , թե ինչու են մանրանկարչին կոչում `Մոմիկ:

«Հայր Աստված » քանդակը

Նորավանք



Մոմիկ - մանրանկար

«Համբարձում» 1302 թ.

Նկարները դիտելուց հետո առաջադրում եմ լրացնել գրատախտակին ամրացված քառաբաժան աղյուսակը պատմվածքի վերաբերյալ:

1.Ի՞նչ էի տեսնում	2.Ի՞նչ ձայներ էի լսում
Կիսավեր խրճիթ՝ձորի մեջ կորած,գույներ, ծաղկած գիրք, երկինք, հնամաշ շորեր, արև,սարեր, ձյուն, անձրև,կեղանիներ,թռչուններ	Գրքի թերթերի ձայն, մարդկանց շշուկով խոսք, քամու, բքի ոռնոց, երբեմն երգի դնդնոց,անձրևի շփշփոց,զայրացած խոսք
3.Ի՞նչ էի զգում	**4.Ի՞նչ մտքեր էին ծնվում**
Ցավ,ափսոսանք,կարեկցանք,զայրույթ,հիացմունք, Զարմանք,հպարտություն,սեր,ցուրտ,տաք	Կարողանայի օգնել նրանց:Լավ մերժեց Մոմիկը,ես էլ կանեի:Երիցակ պապ,ես քեզ սիրեցի:Լավ է՝լավ մարդիկ կան:Արվեստը ուժ է:

Այս ամբողջից հետո ուսուցանող գնահատում եմ անում խրախուսելու և զարգացնելու համար.երեխաները ոգևորվում են:Հանձնարարում եմ տնային աշխատանք.բառային աշխատանքի մնացած վարժությունները և երեք նախադասություն պատմվածքից՝ 1.Ես նրան իմ պապն եմ համարում: 2. Թե ինչու հիմա այդ քաղաքում չենք ապրում: 3.Այդ չորս աչքն այնքան բան ասացին...Երեխաները պիտի փորձեն այդ մտքերը ընդարձակել , ինչ-որ փոքր պատմություն ստեղծել ըստ պատմվածքի:Վերջում կատարում ենք անդրադարձ, թե ինչ արեցինք դասին, ինչ իմացանք և ավարտում ենք առաջին դասը:

2.2.ՄԱՅՐԵՆԻԻ ԻՄ ԴԱՍԸ: Դաս երկրորդ

Դասն սկսված է,երեխաները՝ ոգևորված. բոլորն ուզում են ներկայացնեն իրենց կատարած տնային աշխատանքը, ու սկսում ենք տնային աշխատանքների ստուգումը:Նախ ստուգում ենք բառային աշխատանքի վարժությունները, որի համար առաջարկում եմ, որ երեխաներն իրենք ուղղեն ընկերների աշխատանքները , որն անում են սիրով ու պարտաճանաչ՝ոգևորված վստահությունից: Ապա բոլոր կողմերից ձեռք են բարձրացնում, որ համացանցից օգտված տեղեկություններով պատմեն

Վ.Խեչումյանի, Մոմիկի մասին: Պատմում են, որ համացանցից ծանոթացել են Վ.Խեչումյանի , Մոմիկի կյանքին, կարդացել «Ցայգածաղիկ» գեղեցիկ պատմվածքը, իմացել են , որ երբ պատմիչ Ստ.Օրբելյանը Նորավանքում 40 քարգործների մի մատնաչափ խաչ է քանդակել տալիս, հաղթում է 16–ամյա Մոմիկը,որի համար պատմիչը նրան Մոմիկ է ասում, քանի որ քարը նրան ենթարկվել էր մոմի պես: Այսպես պատմում են երեխաները , ապա սկսում ենք դասը կարդալ, որից հետո նրանք ներկայացնում են պատմվածքից ընտրված նախադասությունների շուրջ տանը ստեղծած փոքրիկ պատմությունները ,որոնք լսում եմ , շտկում քերականական, բառային թերությունները , բայց փորձում եմ չդիպչել մտքին , չդարձնել իմ մտածածի նման,այլ ընդունում եմ իրենց մտքի ընթացքը, երևակայությունը և այդ մասին խոսում եմ , բացատրում իրենց:Երեխաները հասկանում են ասածս, դա դուր է գալիս իրենց.թեթև ինքնահաստատում է տեղի ունենում:Ոմանք ստեղծել են հետաքրքիր, հաջողված պատմություններ, ոմանց մոտ ոչ այնքան հաջող է ստացվել, ասում եմ.

-Ապրեք, երեխաներ՛, լավ եք աշխատել, մյուս անգամ ավելի լավ կստացվի: Առաջարկում եմ տեքստի մասերին վերնագիր դնել և պատմել իրենց բառերով: Երեխաները շատ արագ կատարում են հանձնարարությունը և առաջարկում տարբեր վերնագրեր. 1-ին մաս -«Մոմիկն ու պապը», «Մոմիկի պատմությունը», «Երկու նկարիչ» , 2-րդ մաս - «Մոմիկի երևակայությունը» , «Առաջին փորձ», «Որոնում» 3-րդ մաս- «Գաղտնիք», «Մոմիկի աշխատանքը», «Գլուխգործոց», «Օգնություն պապին», 4-րդ մաս- «Անծանոթը», «Գորգիկի խարդախությունը», «Մերժում», «Հին պատմություն» ,«Ազնիվ մարդիկ», «Մոմիկի պատասխանը» և այլն:

Դասարանն աշխույժ աշխատում է, ես առաջարկում եմ խմբերի բաժանվել , անուն ընտրել որևէ գույն և իրենց ու գրքի բառերով բնութագրել պատմվածքի հերոսներին՝ իրենց ընտրությամբ: «Կրակերանգ» խումբն ընտրում է Մոմիկին, «Ոսկեգույն» խումբը՝ Երիցակ պապին, «Լաջվարդ» խումբը՝ Գորգիկ վաճառականին:Խմբերի անունների ընտրությունը երեխաները պատճառաբանում են պատմվածքում այդ գույների

ներկայությամբ:ՈՒ բնութագրում են...**ՄՈՄԻԿ** –բարի, ազնիվ , աշխատասեր պատանի, որը իսկական ընկեր է Երիցակ պապին, սիրում է նրան հարազատի պես , ուզում է նրա համար միշտ լավ բան անի, նույնիսկ նրան մեջքով հենվում է, որ տաքացնի ձմռանը:Դժվար պահին, երբ պապը ծերությունից հոգնում ու էլ չէր կարողանում աշխատել, նա ապրումակցում էր նրան, թաքուն օգնում: Խումբը, իրար լրացնելով, բնութագրում է. թեև սկզբում նա հարազատներ չունեցող մի պատանի էր,մի քիչ էլ խեղճ, բայց հետո դարձավ մեծ նկարիչ, խելացի ու մտածող մի մարդ ու Գորգիկին մի լավ պատասխան տվեց՝ ինքնաճանաչում ձեռք բերելով : **ԵՐԻՑԱԿ** պապ –Մի շատ բարի ,ազնիվ, հոգատար մարդ, համեստ ու մեծ մանրանկարիչ, որ իսկական պապի նման սիրեց Մոմիկին, նրան սովորեցրեց նկարելու արվեստը, ներկեր պատրաստելու գործը, այնքան լավ մարդ, որ տեսավ Մոմիկի մեծ գործը, բայց չյուրացրեց և Մոմիկին ասաց, որ նրա իրավունքն է Գորգիկին պատասխան տալը:Նա այնքան էր աշխատել, որ ձեռքի երեսին ջլերը ասես ճոպաններ լինեին, նա էլ իսկական ընկեր ու բարեկամ էր: Խմբի բոլոր անդամները եռանդուն մասնակցում են: **ԳՈՐԳԻԿ** – խումբը միանգամից ասում է , որ այդ մարդը իր տեսքով էլ դուր չեկավ իրենց .«Եկվորի դեմքին աչք չկար.մանր էին, կորել էին <u>հոնք</u>-<u>մորուքի</u> տակ»,նա անազնիվ էր վարվել Երիցակ պապի հետ,անվճար առել էր նրա ծաղկած ավետարանը: Նա մենակ իր շահի մասին էր մտածում ,կեղծավորաբար գովում էր , բայց խաբում: Երիցակ պապի ու Գորգիկի հայացքներից շատ բան էր հասկանալի անցածի ու լինելիքի մասին:Գորգիկ վաճառականն անհոգի մարդ էր,նա տեսնում էր Մոմիկենց պայմանները ու ոչ թե օգնում, այլ դրանից ուզում էր օգուտ քաղել:Մինչ խմբերը բնութագրում էին,ամեն խմբից մի աշակերտ գրատախտակի m-աձև աղյուսակում «իրենց» հերոսին էր ներկայացնում, և այդպես ձևավորվում էր նաև համեմատումը: Մինչ լիարժեք համեմատումը սկսելը խմբերին առաջարկում եմ միմյանց գնահատել՝հնարավորինս պատճառաբանելով,թե ինչու այդ գնահատականը: Ապա ասում եմ.

-Լավ, երեխանե՛ր, եկեք հիմա համեմատենք մեր հերոսներին,տեսնենք՝ով էր ճիշտ,ով՝սխալ:Երեխաները համեմատում են,ճիշտ ու ազնիվ են համարում Մոմիկին և

Երիցակ պապին.նրանք տոկուն,դժվարություններից չվախեցող մարդիկ էին,նրանք չգնացին գործարքի հանուն փողի,այլ բարձր դասեցին արվեստը, իսկ վաճառականին մեղադրում են,գտնում են,որ նա սխալ վարվեց Երիցակ պապի ու Մոմիկի հետ,չփորձեց անգամ տեսնել նրանց վիճակը,օգնել:Ես փորձում եմ սրել զրույցը,բանավեճի տեսք տալ.

-Թող չխաբվեին, ինչ մեղք ուներ Գորգիկը, թող ճանաչեին նրան: Երեխաները չեն համաձայնում.եթե մարդը միամիտ ու ազնիվ է,առանց խղճի խայթի խաբե՞ն: Երեխաներին հարցնում եմ.

-Եթե Երիցակ պապը լավ մարդ էր,ձեր կարծիքով, ինչու այդքան երկար լռում էր ու ոչինչ չէր ասում Մոմիկի գիշերային աշխատանքի մասի,թողնում էր՝ նա իր համար աշխատի՞ :

-Որովհետև չէր ուզում խանգարել նրան,եթե խոսեր ,կարող է Մոմիկը կիսատ թողներ:

-Իմ կարծիքով,Երիցակ պապը լռում էր,որ Մոմիկն իրեն լավ զգա,որ օգնում է պապին,ինքն արդեն կարևոր մարդ է,կարող է օգնել ուրիշին:Իրենք էլ ինձ են հարցնում,թե ես ինչ եմ կարծում:

-Ապրեք,երեխաներ,պապն «օգնում էր» ,որ Մոմիկն ինքնահաստատվի ,կայանա:Նա սիրում էր Մոմիկին ու հպարտ էր նրանով:Իսկ այսօր՝մեր օրերում,մեր կողքին կա՞ն Մոմիկի,Երիցակ պապի ու Գորգիկի նման մարդիկ ,հը՞,ինչ եք կարծում:

-Կան,ինչու չկան,լավ ու ազնիվ մարդիկ էլ կան,Գորգիկի նման էլ կան:

-Վաղու՞ց գիտեր պապը Գորգիկին,ի՞նչ եք կարծում, և որտեղի՞ց :Երեխաները ասում են ,թե այո,նա վաղուց գիտեր,էն մութ պատմությունը հենց նրա հետ էր կապված,հենց այդ ժամանակ է Գորգիկը խաբել պապին,պապն էլ հեռացել է,իսկ դա եղել էր Անիում:Հարց եմ տալիս Անիի մասին.

-Ի՞նչ քաղաք է Անին:

-Հայոց մայրաքաղաքներից է,մեր գեղեցիկ ոստաններից մեկը,- ասում են երեխաները, ու մենք մի փոքր պատմական,աշխարհագրական էքսկուրսիա ենք կատարում դեպի **Անի,**նույնիսկ երգի տողեր ենք հիշում,զարթնում է կարոտ կորած էրգրի նկատմամբ: Բոլորս հուզված ենք,լցված հայրենասիրությամբ:

Նորից վերադառնում ենք հերոսներին ,որոնց նկատմամբ որոշակի վերաբերմունք է ձևավորվել,գնահատում ենք նրանց, նրանց արարքների հետևանքները,թե ինչպես պապն ու Մոմիկը Գորգիկի պատճառով էլի « **մնացին ցրտին գերի**», երբ իրենց նկարներում, գրքի ծաղկած թերթերում «ձյուն ու բուք չկար»:Այստեղ հիշում ենք դարձվածքները,դասից և ոչ միայն դասից բերում օրինակներ: Երեխաներին հարցնում եմ ,թե ինչպես էին ծնվել այդ տաք ու ջերմ , ծաղկած թերթերը: Երեխաները պատմում են, դասից կարդում այն հատվածները ,որտեղ ներկայացվում է , թե՛ ներկերի պատրաստման՝չմոռանալով շեշտել որդան կարմիրի մասին, թե՛ծաղկելու ձևերի մասին, և նորից մի քանիսը հիշում են, որ Մատենադարանում եղել են այն սրահում,որտեղ ներկերի մասին են պատմում: Երեխաներին հանձնարարում եմ դասից գտնեն,կարդան գեղեցիկ արտահայտություններ,իրենց դուր եկած մտքեր,նաև այն հատվածը,որտեղ պապն ասում է Մոմիկին , թե նոր գրքի վրա պիտի երգ՝ **հայրեն**, գրեն:Երեխաներին բացատրում եմ,որ հայրենը բանաստեղծության տեսակ է , որ տարածված է եղել միջնադարյան Հայաստանում, այն ժամանակ,երբ ապրել է Մոմիկը:Փոքր, չորս կամ ութ տողանի գեղեցիկ, հատկապես սիրային բանաստեղծություն է, և Քուչակից հայրեն եմ ասում:Մեկ վայրկյան դադարից հետո երեխաներին ասում եմ ,որ մի խաղ ենք խաղալու ու. բացատրում եմ Բլումի երիցուկի մեթոդը , որին դիմում եմ քննադատական մտածողություն զարգացնելու համար: Գրատախտակին ամրացնում եմ երիցուկի վեց թերթիկ՝տարբեր գույներով,ամեն թերթիկի տակ որոշակի տեսակի հարցերի պահանջ կա,ըստ որի սովորողները պիտի հարցեր կազմեն և առաջադրեն ընկերներին: Քանի որ արդեն իրենք թեմային ծանոթ են,մենք կսկսենք հարցեր կազմելը:Այսպես,առաջին թերթիկը՝ ենթադրենք կարմիր,կպահանջի պարզ հարցեր՝ո՞վ,ե՞րբ կամ ի՞նչ,սովորողը կարող է ասել.**Ո՞վ էր**

Մոմիկը: Հարցը կփոխանցի ընկերներից մեկին,որ պատասխանի:Երկրորդ թերթիկը՝կանաչ, կպահանջի մեկնաբանող հարց.**Ինչու՞ էր նա ապրում Երիցակ պապի հետ**:Նա էլ կփոխանցի,որ պատասխանեն :Երրորդ թերթիկը՝դեղին, կպահանջի հստակեցնող հարց.**Ճիշտ եմ հասկանու՞մ,որ Երիցակ պապը ապրել է Անիում և ինչ-որ մութ գործի պատճառով հեռացել Անիից** : Չորրորդ թերթիկը՝կապույտ, կպահանջի գնահատող հարց.**Լա՞վ էր,թե վատ,որ Մոմիկն ու Երիցակ պապն ապրում էին միասին**: Հինգերորդ թերթիկը՝մանուշակագույն, կպահանջի ստեղծագործական հարց,**Ի՞նչ կլիներ,եթե Մոմիկը չլսեր պապին և չմերժեր Գորգիկին**:Վեցերորդ թերթիկը՝նարնջագույն, կպահանջի պրակտիկ հարց,**Ինչպե՞ս կվարվեիք դուք,եթե լինեիք Մոմիկի փոխարեն**: Հարցերը կազմելով և փոխանցելով ընկերներին՝կստանան պատասխաններ,որոնք կզարգացնեն քննադատական մտածողություն:

Այսքանից հետո կհանձնարարեմ այս վերնագրերով տանը գրել փոքրիկ շարադրություն՝ստեղծագործական միտքը զարգացնելու համար:**1**.Եթե ես Մոմիկը լինեի:**2**.Ո՞րն է իսկական բարեկամությունը:**3**.Բնության գույներն իմ աչքերով:

Վերջում կատարում ենք անդրադարձ՝հստակեցնելով՝ինչ սովորեցինք,ինչ արեցինք դասին:Օգտագործելով գնահատման Բլումի սանդղակը՝ բոլոր երեխաներին միավորային գնահատում եմ անում:

Ավարտում ենք դասը,թեման՝մեզ հետ վերցնելով գեղեցիկ ,բարի,ազնիվ մարդկանց օրինակը , որ կյանքում ժամանակի ու տարածության մեջ փնտրենք նրանց նմաններին,սովորենք նրանցից,իսկ վատ մարդկանց ճանաչենք ու հեռու մնանք նրանցից կամ էլ օգնենք,որ դառնան լավը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասերին իր առանձնահատուկ տեղն ունի ուսուցման և դաստիարակության համակարգում:Այն պահանջում է ամենօրյա տքնաջան աշխատանք:Արժեհամակարգի ձևավորման երաշխիքներն են աշակերտակենտրոն ուսուցումը,բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը, նրանց մեջ կարողունակությունների զարգացումը, պատմելու, իրենց լսել տալու կարողությունը, կապակցված գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտությոան զարգացումը, հետաքրքիր ու բովանդակալից մեթոդների կիրառումը, միջառարկայական կապերի ստեղծումը:

Մայրենիի դասերի միջոցով սովորողների մեջ արդարության, ազնվության, հավասարության, համամարդկային հատկանիշների դաստիարակումը, սեփական ազգային արժեքների ճանաչումը, քննադատական մտածողության զարգացումը, սոցիալական հարաբերություններում մարդկանց արարքների վերլուծումը, համեմատումը , հայրենասիրության, մարդու ու բնության նկատմամբ սիրո դաստիարակումը դիրքորոշում է ձևավորում ու հասցնում բարձր արժեհամակարգի ձևավորմանը:

Թեման ,որ մենք ուսումնասիրեցինք ,մայրենիի դասերից միակը չէ,որ հնարավորություն է ստեղծում արժեհամակարգի ձևավորման համար, միայն պիտի բոլոր նյութերի մեջ էլ գտնել այդ հնարավորությունը և սովորողների մեջ ձևավորել արժեհամակարգ, որ զարգանա ստեղծարարությունն այնպես, որ նրանք կարողանան դրանք կիրառել կյանքում: Կյանքում փնտրեն, ճանաչեն, գտնեն Մոմիկի,Երիցակի նման մարդկանց ու նմանվեն նրանց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Մայրենի 6 –Հանրակրթական դպրոցի 6 –րդ դասարանի դասագիր «Էդիթ Պրինտ» հրատարակչություն: Երևան 2020: 241 էջ:Մաս 2-րդ:էջ 159-164:

Հեղինակներ- Դ.Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան

2.Աղայան Է. Բ.,Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2,-Եր.:Հայաստան,1976,-925 էջ:

3.Հայոց լեզու,գրականություն:Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:Երևան:Անտարես,2006,148 էջ:

4. Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան - Վիգեն Խեչումյան

5.Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան - Մոմիկ

6. Համացանց - Վիվալդի - «Տարվա եղանակները»,

7.Համացանց - Մ.Սարյան ,Մ.Ավետիսյան,Վ,Սուրենյանց – գեղանկարներ

8. Համացանց –Բլումի երիցուկի մեթոդ

9.Ինտերակտիվ դասընթացի մոդուլ

10.Էդ.Զրբաշյան, Հ.Մախչանյան, Գրականագիտական բառարան «Լույս» հրատարակչություն, Երևան:1972, 328 էջ: